

ԴԻՒԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ

ՆԱՄԱԿԱՆԻ

ԳՐԻԳՈՐ ՇՂԹԱՅԱԿԻՐ ՊԱՏՐԻԱՐքԻ

ՆԱՄԱԿ ԹԻՒ 38 (50Բ)

ՀԱՅՈՒ

ԱԽՈՏՈՒԾՈՂ

Հասցէ գիրս ի Սուրբ Երուսաղէմ, ի Սուրբն Յակով,
ի ձեռն թէոդորոս և Գարբիէլ վարդապետաց. ան-
րոց ի նոստ հասուցանողն՝ յԱխուծոյ օրհնեացի, ա՛մէն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Է

Պատուելի որդոցդ իմաց ի քրիստոս՝ Տեաբցդ Գարբիէլի
և թէոդորոսի Ախուծածարան վարդապետացդ բազմա-
կարօս ողջունիւ յայտ լիցի.

[Մարտ 26, 1737]

Զի ահա յղեալ մէնզին յերից ազգացդ Գրիգոր անուն եհաս աստ ի
Բիւզանդ՝ և գրեն՝ ի մեղ և ի տեարան եհաս որպէս և զրեալ էիք. և ի միւս
օրն զէ՞ս եղեւ զի Եսֆայու կօմրուկու մարդն ճանապարհորդ եղեւ մէնզին՝
ի Յոպակ՝ վասնորոյ յաղայ Պապասիէն շուտով զիր առաք ի գերոյ մութէիչ-
լիին և ընդ այլ զրեաց յղեցաք առ ձեզ՝ ոչ միայն մեք՝ այլ և միւսքն եւս՝
և զարգերն էլչիսկին առեալ յղեաց յօրառն՝ և յան ձն էառ զի հոգացէ վասն
զի հնար ոչ զոյ թէ աստ իր ինչ հոգացի, ցորքան փոխանորդն մէծին իւր փո-
խանորդիւ արտաքոյ է Պոլոսյ՝ վասն այնորիկ և մեք ուրկէրտան նստեալ
կամք՝ զոր աէրն ամենայնի մեղ ողորմեսցի՝ և նոտն առննդ այդորիկ խոր-
շեցաք յղել այդք զատարկ՝ զի բանն յուշ կլինի՝ և զի՞նչ օգուտ նստիլն իւր
աստ. վասնորոյ որպէս զրեալն էիք, զ. ազգս ծ. ական զուտչ որ լինի և զուտչ
առուաք իւրն խարցիլն և յղեցաք առ ձեզ. և զուք որպէս կամիք այնպէս արա-
րէք ըստ պազարին զոր ընդ զմա արարեալ էք. զի թէպէտ ինքն ասաց թէ կա-
միք՝ մնամ մինչեւ իրն լիցի՝ զի առեալ զնամ, բայց երեքս ոչ կամեցաք զմբ-
նալն վասն յուշ լինելոյ իրին. և որպէսն մեր այս է. զի այսօր ի Մարտի ին-
մեծ ժողով եղեւ ի Սուրբ Աստուածածին Եկեղեցին վասն Սրբոյ Տանդ և մերս
որպէսութեան և իմ զամօթն յետ դնելով՝ զամենայն ինչ խօսեցայ վասն մեր
և վասն Պատրիարքին մերոյ՝ և պահանջեցի նողրը դապղիմալ հաստատել՝

զի պազութիւն իմն ի մէջ խրեանց գոյր և Աստուծով զսակաւ նշոյլ ինչ սիրոյ ցոյց ևուոն՝ միարան քահանայք և ժողովուրդք զձայն բարձեալ թէ որպէս կամփօ՝ այնպէս արացուք, և արձակեցան խաղաղութեամբ. Եւ Աստուծով ի վերայ այնմ խորհրդոյ եմք՝ աղօթս արարէք վասն մեր. Եւ զի թէպէտ եղեւ զժառութիւն ինչ ի մէջ Պատրիարքին մէրոյ և Սրբոյ էջմիածնի նուիբանի Պետրոս վարդապետին, յաղգմանէ չարին, և ի չարաց ոմանց մինչ մէք ի մտչինս Հիւանդութեան էաք. Աստուծով և այն եւս խափանեցաւ և յամօթ եղին այնք՝ որք զշարիսն գործեցին. Եւ զայսոսիկ վասն այնորիկ զրեցի իմ սիրեւեացդ՝ զի մի՛ ոք զայլ իմն բան զրիցէ այդդք՝ զի այսպէս եղեւ. Եւ կաթողին սիրով զողջոյն տամ միարան եղբարց մեծաց և փոքունց, և սիրելի որդոցն իմոց Յովաննէս յոպնիմաստ վարդապետին, և Կարապետ և Յակով ժարդապետաց՝ և տիբացու մահանի Գալոպարին, և Թարգման տիբացու Պաղոսին. և զայս զիստանիք իմ ցանկալիք. զի ի Յունկարի լա. մէր սիրելի սրտացաւ բարեկամ մահանի Սարգսն զարֆայն անցիշելի ցաւօք տարածում մահաւոմը յանկարծ ի կենցազոյն փոխեցաւ, և մեծ տրամութիւն եղեւ մէզ. վասնորոյ ի հասանիլ զրոյն՝ զանուն նորա զրէք ի մէջ յիշատակի տեմբառկին, և քառասունք տայք կատարել՝ զի տէրն ամենայնի ոզարմեսցի հողոյ նորա, զի մեծ բարեկամ էր Սրբոյ Տանդ՝ և մէզ:

(Լուսանցքին վրայ) Սրբն իմոյ բէիզ վարդապետիս վամփողմամբ մեծաւ զողջոյն սիրոյ ընծայեմ իւրն և խրայնոցն. Եւ որպէս զրեալ եմ ի նախոկին զիրն այնուին թող լինի: Այլ և զայս ծանիք ո'րդիք իմ. զի այդ մէնզիլ Գրիգորդ ի զալն իւր այտի՝ հանդիպեալ է յԱստանայ քաղաքն և նաշար՝ մնացեալ է ապաչեցեալ է զիշխանն քաղաքին և երեսուներեք զոռուշ ի նուցանէ տանեալ. մի զնենալ այն զրամովն հեծեալ եկն տաս՝ և աստի կրկին հեծեալ զին եկն այդք. զի բէշվարն Գրիգորին մնաց. Եւ լզ. զոռուշ զրեցաք մէր զանձապետաց զի ի զանձանակին տայցեն. արդ, ճ. զոռուշ ընդ միւսոցն տուաք և լզ. զոռուշ ձիոյ զին, որ լինի խզ. զոռուշ. հիսապ տեսնիք հետ իւրն և ի վերայ այն խզ. զոռուշն զիւր վարձե լնուք և տայք որպէս և խոստացեալ էք. Եւ չինի թէ յոյզ տեղդ ձեր զիլուտ արդ և մահաւորի անուն տայք կամ ժողովիք, զի վնաս է այժմ. բայց թէ ի նոր զատաւորէն զիր մի առնուք յդէք, որպէս ի հնոյն տեսեալ էիք յանձնարարութեան, որ տամք ի չեխ խալամն. զի այն զատաւորի հնոյ զիրն յոյժ օգուտ եղեւ մէզ ի կողմանէ մաղոսեացն զի իմացան զատութիւն և զրկողութիւն նոցա. բայց յոյս մէր յԱստոււած և ի սուրբ իւր. Եւ ողջ լեռուք ի տէր և ի պարձանս հիքոյ Գրիգորի, որ ի Մարտի իզ. յօր տօնի Սուրբ Լուսաւորին մէրոյ զգիրս ծրեցի ի Սուրբ Աստոււածնի եկեղեցին որ ի Ստամպօլ. բաւ է:

¹ Անեար, անօգնական: Ակամայ:

ՆԱՄԱԿԻ ԹԻՒ 39 (53Բ)

ՀԱՍՑԵ

Ի Սուրբ Երաւանպէտ

զնն մասն ի ձեռս թէսողորոս և Գարբիէլ և Յովաննէս
վարդապետաց հասցէ զիրս ի բարին

կ'

Աղնիւ որդոցդ իմոց ժրաջանիցդ Տեսարցդ Գարբիէլի,
թէ ողորոսի և Յովաննու աստուածարան վարդապետացդ
Հարազատ ծառայիցդ Աստուածոյ և Աթոռոյդ Մըռոյ.

[Յունիս 25, 1737]

ՄԵծաւ չնորհակալութեամբ և բազմաւ գոհունակութեամբ զողջո՛յն զոկ'ք և զիստուծոյ օրհնութիւն յո՛յժ կարօտիւ մատուցանեմ. և արտասուօք խնդրեմ ի հեշտալլոյ տեսունէ՝ զի պահեսցէ զձեղ ընդ հայունաւ տմէնազօր տջոյն իւրոյ՝ ազատելով զձեղ յամենայն փորձութեանց և յանիքաւ արանց. և որպէս ջանիւ մեծաւ Աստուածոյ զլործն կատարելով երեսապարզ զմեղ աստ արարիք. տէրն աերանց զձեղ պահեսցէ պարզերես յօրն աներեկի. և զի ահա յաջողմամբ տեսան տէրունական ուխտաւորքն բարեւաւ եկին անդնաս չնորհակալ ի Մըռոյ Աթոռոյդ և ի ձէնջ ուրախ որտիւ. իբ. օր կացեալք ի վերայ ծովուն խաղաղ օդով. և բազմաշխատ սիրելի որդին մեր Աստուածատուր վարդական. գամենայն զզրերն՝ զտէ Փուէրն, գապրանան՝ և վարդիւնան՝ ձեր զրոյ միւճիպայն լի և պատարուն հասոյց և թէսիմ արաք ի ձեռու մէր. հացէ ձեզ տէր յօդնութիւն որպէս դուք հասկիք մեզ. դիսէ տէր ո՞րդիք իմ. զի սր ինչ ի հետո կայիր՝ և ի նույիքակացն և յդեալ բերի. և մասն ինչ ի ձեր նոր յրդածէն ամենայն յայտնեղաց յանցեալ ամի արարեալ պարտքն զնաց որ գեռ մէր շէաք ի տեղս եկեալ արարեալ էին. և զեսեւս տուոն ի կախ է անտիքին. և մեզ արդիւնք ինչ տառ ո՞չ եղեւ զի նույիքակ Մըռոյ Գահին ի մէջ քաղաքին էր. և Հոգեւոր տէրն առ Աստուած փոխեցաւ ի նոր Կիբակէին. Հոգոյ նորա Աստուած ողորմի. և նոր լինոց զեսեւս յայտնի չէ. ի Մայիսի զ. զրեալ զիր բոյ վասն մահուան համշիքակ սիրելի Հօր և Եղորն իմոյ Մարտիրոս վարզուութիւնն ենաս ի մեզ ի Յունիսի ծզ. Ա՛րդեակ իմ Գարբիէլ վարդապետ, և բալով լացի զնա և բամ զիսդութիւնս իմ որ կարօտ մնացի յիմ սիրելեացն. տէր ողորմեցի Հոգոյ նորա և ընդ սուրբս իւր դասենցէ. և ձեզ զկեանս յերկարու տացէ. և ի տեղի նորա ի Սուրբ Հրեշտակապետն պատշաճ համարիմ զի տէր Գաղպարն լիցի. բայց սիրով համոզիցէք զնա և մի խստութեամբ. Աստուած ինչը տայ ձեզ՝ զայս ինեղն փոտած ծեր տէր Մահակն է՞ր հանիք այտի՝ որ եկն նա այլ անկաւ. ի վրաս. զի որպէս լսեմ արմէ կարած ականջ ոկտոն յաւլ իմշէ փոխեալ ճարագն զակամբ եկեալ զմեծամեծու բարբառելու և զիւր զպիզծ բոկտոն առ ինքն բերելով. ափաս զձեղ որ զմէկէլ ունեն չէք կտրեր անոփ հանելով. թէ յիրաւի է զրեցեալքս և լսածս. մեր խեղն Աթոռունն՝ մինչ հիւանդ էի անկեալ՝ յինէն զաղոտ զնաց զրուշտն ետ հանել՝ և հոգին եւս ել ի մարմնոյն և թաղեցաւ՝ ևս զի՞նչ առնեմ. բայց զկտակազիրն տեսի, զի ի հանգուցեալ լուսարար Աստուածատուր վարդապետն փոքր մնուուկ մի ամանաթ է տուեալ լինի թէ ի Սուրբ Սարգիսն է. թոզ մեր որդի նոր լուսարար Աստուածատուր վարդապետն հանէ բերէ առ ձեզ՝ տեսէք զինչ կոյ ի մէնչ, ինձ ծանուածիք. զպիրեն ի տեսարն համենայն իր անկատար է. ոչ մերն միայն, այլ համայնց. այլն սոսիին ոչ բարով եկն ասու. այլ զվասն է՞ր զալն ոչ խմացաք, զի բնաւ երթեւերացի ոչ բարով եկն ասու. այլ զվասն է՞ր զալն ոչ խմացաք, զի բնաւ երթեւերացի ոչ բարով եկն ասու. այլ զվասն է՞ր զալն ոչ դրոյց. Մարտիրոս և Աստուածատուր վարդապետաց ըստակն եթէ կարելի է՝ աստ յդիցէք. և եթէ ոչ՝ առ պատ-

ուելին իմ բէիզ վարդապետն մնացէ՝ և արտասուօք ի ձէնջ խնդրեմ եւ հարկիւ սիրոյ պատուիրեմ չլինի թէ զիմ ծեր բէիզ վարդապետի օրհնեալ օրտիկն զառնացնէք. այլ սիրով և միաբարութեամբ պատուեցէք և մնձարան օք վասրն Աստուծոյ և մերս խաթերն. և ահա թ. մեծ խաչ յերկուց հանդուցեալ պետացն յանուն ետու ի շինէլ զզահը էնն¹ քան զայլ ամացն աւելի լցէք. թէ ի տեղն մնայ զարար չէ. և մեր միտքն Աստուծով ի գայն է միայն ի Սուրբ Տեղիսն աղօթու արարէք, զի յաջողեսցէ տէր զդործու մեր ի բարին. գիտէ Աստուծու զի յո՛յժ զզուեալ եմ յաստ կենալոյն սակու յուրով պատճառի որ չէ՝ այժմ զրելի. Լատինքն յայնմ կողմանէ զոր գրեալն էիք թէ պաթալ արա՛ մեղ յայնմ կողմանէ բան մի բնաւ չիշեցին.

(Լուսանցքին վրայ) Ո՞չ բարու աշօք թափածեալ սրտիւ բեկեալ անձմբ պարանցափար խղճալի կարօտիւ զողջոյնն սիրոյ քեզ ընծայեմ, Հայր իմ հոգեւոր և լոյս աշաց Յովաննէս ծերունի բէիզ վարդապետոց իմ. Հարցանելով զորպէս երանելոյդ. Եզրայրն մեր Մարտիրոս վարդապետն եւս զնաց առ Քրիստոս թողլով ինձ սուզ և արտօռ՝ վասն կարօտ մնալոյ մեղ ի միմեանց. այլ կամք տեառն օրհնեալ լիցի. և Սուրբ Հոգին Աստուծած զբեզ և րդմեղ միաբարեսցէ. ոեն. (1500) զուու կէլիրն Սրբոյ Յարութեան ի մեղ հնուս, տէր ասացէ քեզ և մեր սրգոցն կարզութիւն. և ահա զումաշիթ թ. փեղին լրացաւ. Աստուծած տայ որ հաւին հասանի բոսանդակն. և ի տէր ողջ յիր հոգու իմ հոգի: Ամենայն Հա՛րց Եղրա՛րց և որդոցս միաբանից կարգաւորաց եւ մահտեսաց իմ սիրուն սիրելեաց՝ այլ և բարգմաշխատ զործակարացո՛ բածայնմ յոյժ կարօտիւ զսիրոյ ողջոյնն եւ զիստուծոյ օրհնութիւնն. և խողրեմ աղերսիւ զմեզ յաղօթից չմոռանայ. սի՛րելի որդիի իմ մոմձի կարապետ վարդապետ եւ թարգման տիրացու Պօղոս՝ իմացայ և զմեր տուեալ արգիւնքն՝ Աստուծած մեղ վարդահատոյց լիցի և ի տեառնէ լիրութ օրհնեալք. Պօ՛ղոս ըղոյմէն չմոռանաս մարզարիս զրովզ. զինկլիզու զմեր նաւն սիմարի վարձէտք, էւշին չեթող թէ զէիրիան նաւն վարձեցէք և զեռ ոչ է եկեալ այն նաւն սաս. և ի տէր ողջ յերութ ի պարձանն կարօտ Գրիգոր իրը պետի, որ ի Յունիսի ին. զիիրս ծրեցի ի վանքն մեր որ յԱւակուտար. բաւէ:

Ասորոց Հալապու դէտ Գէորգ վարդապետն զրեաց մեղ՝ թէ զրեա՛ քո մարդոց որ մեր վանաց տիրութիւն անեն մինչեւ մեք մարդ ըզրկեմք. և ևս իւրեանց կաթողիկոսին զրեալ եմ թէ յաւ մարդ մի բղրկես. վասնորոյ տիրութիւն անէք վասն Աստուծոյ զի մե՛ր են: Ամէն զործակալ հնու իւր զարձայն կեցցէ, և սիրով ընդ միմեանս կացէք և զիրերս շահեցէք, մինչեւ Աստուծած յոյս արասցէ մեղ՝ կրկին ողջ յիք:

Սարկաւագ մահտեսի Արքահամին իմ վաղեմի սիրելոյն զողջոյն եւ զիստուծոյ օրհնութիւն ընծայեմ. և ի ձէնջ խնդրեմ զի տիրութիւն առնիցէք նմա և խարճիմիկ այլ տայք նմո զի ուժուր տեսուծ մարդ է ո՛րդիք. իմ սիրելի մահտեսի Գաղպարին տամ զօրհնութիւն Աստուծոյ. և իմ որդի Յակոր վարդապետին եւ ծնողաց իւրոց զՄուրբ Հոգոյն Աստուծոյ զշնորհն ընծայեմ, յԱստուծած և ի ձեղ յանձին. Հարզագատ որդոցս մահտեսի ներսիսին, մահտեսի Արքահամին կրկին զԱստուծոյ օրհնութիւնն տամ. ո՛ր զիք, ի զործո ձեր արի կացէք՝ զի զօրհնութիւն եւ զարքայութիւն աւեառն ժուանգիցէք. և տէր օդնեսցէ ձեղ՝ ամէն:

Հայցիւ մեր բարեկամաց յայդ զբարեր Հրէէն ն. զուու տուաք. տայք, զթէմէսիկն առնութ ի նմանէ:

¹ Պարէն, արմտիքի պահեստ:

ՆԱՄԱԿԻ ԹԻՒ 40 (58Բ)

ՀԱՅՑ

ԱՍՏՈՒԾԱՂ

Հասցէ դիրս ի ձեռն Աթոռակալ Գաբրիէլ
վարդապետին . եւ տեղապահ Թէոդորոս վարդապետին եւ
Կարապետ եւ Յովաննէս վարդապետաց՝ անրաց Հասու-
ցանոցն ի նոսա զգարձու յԱստուծոյ առցէ՝ ա՛մէն :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Է

Իմ աշացս լոյս քրանական որդոցդ՝ Տիարցդ Գաբրիէլի,
Թէոդորոսի, Յովհաննու եւ Կարապետի վարդապետացդ՝ զողջոյնն
Քրիստոսաւանդ բազմամիզ կարօտիւ ընծայեմ, եւ զտեան
օրհնութիւն մատուցանեմ

[ԱՆգլիական 1, 1737]

Եւ ի Հեծոալրոյ տեսանէ ինդրեմ դի պահեսցէ զմեղ յամենայն ձախո-
ղակի փորձութեանց, յերեւելի եւ յաներեւոյթ թշնամեաց . եւ յայտ լիցի Հո-
գեծին զաւակացդ իմոց՝ դի նախ պալրինչին եկի գրերօք՝ ընդ նմա եւ գարրին
Յակորն . զնա արգելաք եւ փոխանակ նորա զԳիիինկիր մահանեսի Ապրիլին յր-
դեցաք միարան, որ է պատուական այլ եւ զիտուն ի գործու իւր՝ միայն շա-
հելն է հունար . եւ յետոյ ի Անգլումբերի ա . եկն յանկարծ Ղօրխմազ Սարդի-
սրն, եւ զրեմալ զիրս նորա եւս ընթերցաք . ո'րդիք չեխ Ֆէյզու բանն թէ լի-
նէր՝ մեք կը հոդայեաք . այլ անհնարին թէ լինիցի, միայն Աստուծոյ է զիտե-
լի . բայց թէ տափակքն առնիցեն՝ զայն ոչ զիտու դի բոնագոյնք են ի մէջ քա-
ղաքիս . եւ ահա Աստուծով ուխտաւորաց նաւն ի Անգլումբերի ք . ել աստի՝ է-
միրհամ նոյն ինքն մեք սիրելի բազմաշխատ որդի կեսարացի Աստուծատուր
վարդապետն . օրհնեալ լիցի յԱստուծոյ եւ ընկալարուք զգա մեծաւ պատուով .
Եւ զնոյն զգա կրկին ի գործանային Նղանակին յղիցէք ընդ ուխտաւորաց . ըզ-
գա եւ ոչ զայլ ոք . եւ լուայ թէ ամենայն մարդ յիւր զործոյ վերայ չի կենար՝
զիւր զործն թողեալ յայլոյ զործն կու խառնուի . ո'րդիք ի՞նչ եղեւ ձեզ այս
մէկ տարիս այլ համբերեցէք . աշխարհ՝ ի վրդովման միջի է . զոհութիւն Աս-
տուծոյ զուք հանգիստ էք, է՞ր զմիմեանս կու խոցուէք, ամօթ չէ՞ մի . զոր-
պէսն ինքն զիտէ եւ իւր քիրայ ժողովեյն . եւ թէ բան մի կայ՝ է՞ր ինձ չէք ի-
մացուցեր . վասնորոյ ո'րդիք իմ սիրելիք . արտասուուք զմեղ ազաշմ մի՛ ըզ-
րանն ձեր յոտք ձգէք, զմիմեանց բեսն բարձէք . եւ երեմիս ուետին ես ի՞նչ
պարտիմ որ նա յինչն բնծ . զուոչ կուզէ . ո՞չ ամաչէ յիւր ձերութեան ալիքն .
վարժանալրոյ բաներ կլսեմք փաշ'ռք Աստուծոյ . արդ ահա ի Անգլումբեր ամ-
սոյ ք . օրն ել աստի Աստուծով նաւն . տեան զոհութիւն այս տարոյ ուխտա-
ւորքն շտոի'կ են, միայն շահե՛լ շահե՛լ պիտոյ է . Աստուծոյ խաթերն համար
յամենայն կողմանէ շահեցէք՝ դի Աստուծով եւ նորօք է Տունն Սուրբ չէն .
սապրանիքն որ յղեցաք՝ կայ որ պիտիր բացուի բատ հասարակաց սովորու-
թեան բաժանուի . եւ այն որ կնքեալ է թող մնայ՝ լինի թէ Աստուծած բարի յա-
ջողումն տայ զամք մեզ պիտոյ է՝ այլ կամք տեան օրհնեալ է . միայն կրկին
անդամ զմեզ ազաշմ սրտացաւք իմ, մի՛ յես չոգիք յոր սկսեալդ էք՝ զզայ-
րէթն ի ձեռաց մի՛ թողուք, դի մի ծաղր լիցուք թշնամեաց մերոց, զոր տէր

չանէ . օրհնեալն յԱստուծոյ իշխանն մեր մահտեսի թօրուն Արայն երախտաւորն մեր մեծ , մին էնկուրցի Կարապետ վարդապետ յզեաց ի խանէն թէ իմ խաթերս համար թող զրէ յԵրուսաղէմ որ չնեղեն զնա՝ արգ զի՞նէ կառէք , կարելի՞ է չէ ասել . զինէ որ տայ զապուլ արէք եւ սիրով համբեցէք աղայի խաթերն համար . եւ թէ զկերպ բանիս մեր զննիցէք զգործոյն՝ տեսան Աստուծոյ է դիտելի . և իրք զարմանալիք առնէ տէր . միայն միարանութեամբ զԱստուծ աղաչեցէք՝ զի վերջն մեր ի բարին լիցի . վասն Աստուծոյ մի՛ նեղարափր վասն զրելոյս եւ թողութիւն չնորհեցէք՝ զի ի սիրոյ օրախ զրեցի . եւ ողջ յերու ի տէր եւ ի պարծան տառապելոյ Գրիգոր պետի . որ ի Սեպտեմբերի ա . զգիրս զրեցի ի Տիգանդիոյ Սուրբ Աստուծածնի եկեղեցին , բայ է :

(Լուսանցքին վրայ) ՅԱստուծոյ օրհնեալ իմ սիրելի խոհեմ եւ հանձորեղ մահտեսի Գաղպարին Հօրեղբայր կոչեցելու , կարօս անձկութեամբ զԱստուծոյ օրհնութիւնն եւ զսիրոյ սղջոյն յարդ սիրով ընծայեմ . եւ զինէպետ սիրելոյն իմոյ հաջի Յօհաննին զանառն օրհնութիւն տամ . տէր իւրն կարողութիւն տացէ . նաև ամենանցունց եղբարց եւ որդոց զԱստուծոյ օրհնութիւն մատուցանեմ . ո՛րգիք , զիտեմ որ պիտի՛ր տրանժաւր մէ է՞ր ուխտաւորաց ձեռք շատ զիր է տուեր . զիտէ տէր որ ամէնքն իրինայով է . և յորժամ զան բարով , զիս կամաչէցնեն . Աստուծ չէնէ որ մինչեւ յայն օրն ի տեղս մնամ . բայց զիսաթերն ի տեղն պահել տառադոյն է . եւ բաւեցի :

Բաղմաշխատ որդոյ իմոյ թէրձիման տիրացու Պօղոսին զԱստուծոյ խնամքն եւ զօրհնութիւն մատուցանեմ սիրով մեծաւ . տէր տացէ զկարողութիւն ա՛մէն :

ՆԱՄԱԿԻ ԹԻՒ 41 (59Բ)

ՀԱՅՑ

Հասցէ զիրս ի սուրբ Երուսաղէմ ,
յամենացանկալի Աթոռն Սրբոյն Յակոբայ ,
ի ձեռոս Աթոռակալ Գարբիէլ վարդապետին ,
եւ տեղապահ թէոզորոս վարդապետին , եւ
այլոց եղբարց՝ ի բարին :

ԲՈՎԱՅՆԱԿԱՌԻԹԻՒՆ

Է՛

Տենչալի եւ վափագելի բարդապատակ ցաւակից հոգեւոր որդիք իմ ի Տէր , Աթոռակալ Գարբիէլ եւ տեղապահ թէոզորոս վարդապետք , զանձառ պահ Յովհաննէս եւ մոմձի կարապետ խոհեմ պիտիք , զիտնական մահտեսի Գաղպար եւ ժբաջան թարգման Պօղոս իմաստոն տիրացուք :

[1. Հոկտեմբեր 1737]

Յանձնէ վշտացելոյ եւ յոգւոյ տառապելոյ՝ ի մշտաժարան Գրիգոր մեղապարտ իրր պիտակ պիտէ՝ խանդազատ զթուղ՝ յո՛րդ արտասուօք՝ եւ անչափ սիրով՝ հասցէ առ ձեզ իմ աշաց լոյս վշտակեցրդ՝ սէ՛ր , օրհնութիւնն եւ չնո՞րհ , հայցելով ի Տեսոնէ՝ տա՛լ ձեզ զօրութիւն , արիութիւն , կարողութիւն եւ համբերութիւն ; եւ այս ինչ լիցի ձեզ յայտ՝ ցանկալիք զառնացեալ ողուոր՝ զի ի Սեպտեմբերի ծը յօրն աշնանմտի՛ զիրն ձեր որ յօդուստոսի ք

գրեալ էիք, Շամայ մէնզիլիւ՝ տուաք նմա ի զուուշ եւ անրաց եհաս առ մեղ. եւ ընթերցեալ գոհացաք զԱսուծոյ ընդ ողջութեամբ կեալն ձեր միամտութեամբ: Եւ թէպէտ իրն կատարեալ էր՝ սակայն զմահարական գիրն ձեր ընթերցան առ եւ չնորհակալ ի ձէնջ յամենիցդ եղեն, վասն կատարեալ սիրոյ առ մեղ. եւ մերս նուասուութիւն վա՛զ ուրեմն չնորհակալ է ի ձէնջ: Եւ վասն Յունաց վէքի կեսարիին որ զրեալ էիք թէ ահա եկն՝ գեռ եւս բարով ոչ է Էկալ ասու, բայց կարծեմ թէ վասն իւրեանց իրին ըրեին զնա՝ խարմամբ հանելով այսի՝ զի գանկատք յուրաք գոն զնմանէ եւ թուի թէ այլ ոչ տեսանէ զերուսադէ եւ զի քիլութիւն տեղոյդ. այնաէս լուսաք որսէն եւ զրեցաք կարծեօք: Բայց թէ վասն եւանելոյ նորա զիր մի ի զատաւորէն առեալ էիք կարի լաւագոյն էր՝ այլ յոյս մեր յիշատուած եւ յիւր սուրբան է: Եւ զամենայն զրանս զրեալ հմք եւ ընդ նաւին յզեալ. նաև վապրանս ձեռամբ մէր սիրելի էմիրհաճ Աստուածատուր ժարդապետին՝ զոր Տէր դինքն զօրացուցէ, եւ խնդրեմ զի մի զա՛յլ ոք ընդ նաւին յզեալ քի Հաւատարիմ ծառայ է Սրբոյ Աթոռուոյ եւ որդի մեր, սիրով բնկարչիք եւ միսիթարանօք: Եւ վասն Ստեփանոս ժարդապետին որ ի Սուրբ Հրեշտակապետն թէիդ կարգեալ էք՝ բարի՛ է. Տէր Գաղպարն յիւր զործոց վերայ կացցէ: Եւ սիրախն Աստուծոյ զձեղ աղաչէմ եւ պատուիրեմ, զի վասն խրատուց դրոյ իմոյ՝ թէ նախօքան զնաւն եւ թէ ընդ նաւին՝ եւ թէ այժմ մի նեղաստիք, զի բառ առաքելոյ՝ ո՞ որդի իցէ՝ եթէ ոչ խըրատիցէ Հայր: ԶՍրբոյ Տանդ՝ զձեր՝ եւ զմիաբան եղբարց զրարին եւ զրան կամիմ. վասն այնորիկ յաշացս լուսոյս կելանեմ և կզրեմ, վասնորոյ թէ զի՞նչ ո՞ր զրեմ պարտիք սիրով ընդունիլ եւ կատարել: Որ եւ այժմ ահա զկարծիս երկուց կողմանցդ բառնալով զայս յայտնիմ զի թէ լիցի զիր ձեր ծածուկ առ իս՝ այնքան, վնաս չէ՝ որ կասկած կկրէք ի միմեանց՝ զի միենոյն բանք են ընդ յայտնի զրեկեացն՝ թէ Եկ եւ զմեզ յայս զործոցս ազատեա՛. եւ յրնթեռնուլն իմ, խորհիմ թէ իւրեանք ընդ միմեանս լու լինէին զայս ո՞չ զրէին. զի ա՛յլ է կարօտութիւն եւ այլ ազատութիւն. արդ՝ լալուս աչօք եւ աղերսիւ զձեղ խրատեմ, զի սրովհետեւ այսքան գրելով զձեղ աղաչէցի՛ եւ չեղեւ սէր եւ միաբանութիւն ի միջի ձերում, որ եւ այս այլ յիմ մեղացն եւ յանյաջողութենէ՛, ուրեմն զայս արարէք. իւրաքանչիւր ոք զիւր զործն թող կատարէ, զմիմեանց բանն ապախտ մի առնէք, ի վերայ իւրեաց մի ծիծաղիք եւ զզործս ձեր արբունչանօք մի կատարէք այլ յօժար կամօք եւ սիրով. եւ մի վափարիք ելանել յիրուսադէմէ, զի մի զուցէ անկանիցիք ի ձեռս աւագակաց. որդիքն իսրայէլի տրտնջացին յանապատի եւ զրկեցան յերկրէն պարզեւաց. տրտնջայի եւ ես այդր ընդ ամենայն փոքու տրտմութեանց՝ զրկեցայ ահա եւ Ես յերկրէդ աւետեաց մինչեւ ցայժմ. Եւ վապագայն Տէրն զիտէ թէպէտ զյոյս ոչ հատանմէ: Մի՛ անմտանայք եւ զուք ո՞րդիք իմ, զիսէ Տէր զի յայսմ միջոցին՝ քան զօրհնեալ երկիրդ՝ հանդարա ոչ զոյ՝ զոր Տէր պահեսցէ յամենայն փորձութեանց: Ո՞հ բիւր երանի թէ ի տեղդ մնալով յետին միաբանից լինէի, քան թէ եկեալ ասու՝ զայսքան շարիք զաշօքս տեսանէի՛ զորս մի ըսա միոջէ զրելս է անհնարին: Առաջինքն պարտօք եւ տոկոսեօք վարեալ անտրտունչ ի տեղդ ախորդէին զկեալն, իսկ զուք ընդէ՞ր ոչ տայք վասոս Աստուծոյ եւ համբերիցէք այդր. կարօ՞տ էք միթէ ինձ ովէս անմտանալ եւ անկանիլ զոնէ ի զուռն: (Լուսանցին վրայ) Գոհութիւն Տեառն զի յԱստուծոյ պարզեւաց ձեղ ինչ ո՞չ զոյ վակաս, բաց ի հոգեւոր սիրոյ եւ յանմիաբանութենէ՛ եւ այն ոչ թէ յԱստուծոյ՝ այլ ի ձերոց ախորժակաց եւ յիմ մեղաց: Աստուծով զԱսուրը Տունը՝ ի՛ ևմ յանձնեալ ի ձեզ եւ ոչ թէ զատարի. եւ ամէնքդ՝ հասակաւ տիօք եւ խելօք կատարեալ, է՞ր զմիմեանս շահէք եւ վայելէք: Թողութիւն արարէք, ի սր-

տիս կոկծանաց եւ ի սիրոյ կզրեմ։ Այլ խելօքներ, դուք ի միմէանց կատկուծ կկրէք թէ զազտ զիր կըրուի։ Եկէք առա տեսէք որ յայլոց զրկումն յամենից ծոցն զիր կայ, զի յումեմնէ մեծէ լուսոյ որ երգմամբ հաստառեաց։ Թէ յուխաւորաց գալստենէն մինչեւ ցերթալ նաւին յերուաղէմէ ինձ դ զիր եկեալէ, եւ թէ զի՞նչ զրեալ կայ ի նոռա ես ի՞նչ զիտեմ, զրօդն դիտէ։ և այս վասնէ թէ ի ձէնջ է զրերն, այլ ի շար յանմիաբան միաբանիցնէ, զոր թէ տոյ Աստուած ժամանակ, նոցա հատուցումն պատրաստ է։ զոցա արտարմունքն այսպէս է, եւ դուք միմամիտք՝ զմիմեանս ոչ դիտէք շահել եւ ես կամ ի տարակուսի, եւ զգինչ առնելիս ոչ դիտէմ, զի սրտադէսն է վկայ՝ զի իմ կամաւ չէ՝ արգելումն ինձ տաս :

Տեսէք ո՞րդիք թմ թէողորոս եւ Յովհաննէս վարդապետք՝ զի յայն դառն պարտուց ժամանակն որ ի տեղդ էի, իմ ցանկալի որդի Աթոռակալ լուսահոգի վարդապետն յորժամ զնայր ընդ երկուց արգաց մէկ խորհուրդ մի անէին, եւ կամ թէ ի տեղ մի զրամ տարոյ լինէին, ինձ կու զայր ասէր՝ թէ արտայսն եղեւ, ես այլ հաւանութիւն կու տայի. եւ թէպէտ ի զրամ տարն կրտսոնչայի, բայց յետոյ լիով կու տայի, զիմ որդոյ ըսպն ի տեղն կպահէի՝ թէ մի ծիծաղեացին ի վերայ նորա, տանլով թէ վէքիլի խօսքն մօտ յիւր միմաւորն չի անցանիր. եւ այն ի սիրոյ ժամանակն եւ մեք ի տեղդ՝ ահա մեր Պօղոսըն հոգալին թող վկայէ զի այսպէս էր: Իսկ այժմ ո՞րչափ զզուշութիւն ժամանակ է՝ որ պատեալ արզն ընդ մեղ թշնամիք են, եւ մեք այլ ի տեղդ չէմք. պարտիք այնպէս խոհեմութեամբ մնալ՝ զի մի ասիցեն թէ՝ այլազդիք եւ թէ նոքա՝ թէ ի Հայոց Վանից մէջն մեծ եւ փոքր չկայ, եւ զայս ոչ թէ վասն այնորիկ զրեմ զի ատելութիւն ձեր յաւելցի եւ զավրանքն ցրուէք ինատիւ², այլ վասն կառավարութեան եւ կարգաւորութեան խրատ տամ, զի մի ծիծաղիցին ի վերայ ձեր թշնամիքն: Եւ դու՝ որդեսկ իմ Գարրիէլ վարդապետ՝ զզոյց լիր յամենայն իրս քո՝ զի ոչ թէ փաքք ինչ է վէքիլութիւն Սրբոյ Գահիդ ընդ եղբարսդ սիրով անէք եւ ի նեղութեանն մի՛ տրունջար. երկու կողմանքդ այլ ըզդոյց կացէք եւ միաբան սիրով, զի լոտեսք չաս կան ի միջի ձերում, զոր Տէր զայնպիսիսն խափանեսցէ, եւ ձեղ ինելք՝ սէր եւ միաբանութիւն տացէ, զի Եւ ես սրտադիր նեղց սակաւ մի: Եւ այս այսպէս որ ունիցի ունեն՝ լուցիցէ: Որ եւ ես զարձեալ յոզք անկեալ զնեղ աղաչէմ, զի անցեալ տարոյ ուէս մուզայիթ լինիք՝ եւ զարդիւնն հաւաքէք, զի մերքն ահա Աստուածով զարթուցեալք՝ զրամ պահանջն ի վատարկ յամանէս՝ զայրէթն ի մօտ ձեղ մնաց: Եւ զոէ Փատէրն ք անէք՝ եւ զմինն աստ բղրիէք՝ թէ աստ լինիմ եւ թէ ոչ: Եւ մերքն լրւեալ են թէ Կիւլ Ահմէտ վաշայն յայդ կողմունքդ զալոց է, հարկիցին զիս թէ զրեալ Գարրիէլ վարդապետին եւ թէրճամանին՝ զի յորժամ ի մօտ զայցէ՝ ընծայիթք առ նա դնացեն եւ վասն մեր զիքի վկայութեան ի մանէ առցեն եւ յիեսցեն. թէ նա աստ դայ եւ թէ ոչ՝ ի նմանէ զիք մի պիտոյ է մեղ որ իւր աշօքն տեսեալ է. Եւ թէ հնար է՝ ի զատաւորէն եւս զիք՝ թէ Յոյնքն անհնազանդք են հրամանի. վաճէռոյ եւ նոցա մէքիլի եկն ի Բիւզանդ, եւ զրայց մի յուաք թէ կեսարն ի մեր քաղաքապետէն մէծէ՝ եւ յայլոց քաղաքացոց արզ եւ մահզոր պիտիր առնու եւ զայ ոչ բարով: Աղաչէմ զնեղ զզոյց եւ արթուր լիրուր եւ Տէր Աստուած զնեղ զօրացուցէ ի վերայ ներհակացն ձերոյ ներդինաց չար թշնամինց: Կրկին աղաչէմ զի ամենեցուն եղբարց զսիրոյ ողջոյն յինէն ողջոյն մատուցէք եւ աղօթս արտիք զի Տէր յաջողեացէ զի զմիմեանս տես-

1 Պատիւ, անոնի, համբաւ, պարկիշտուրիւն:

2 Հակառակուրեան ոպիով, նուեկ յամանքը թեամբ:

ցուք : Եւ ողջ լեռուք ի Տէր Եւ ի պարծանոս վարտնեալ Գրիգորի իրք պետի որ
ի Հոկտեմբերի ա դդիրո ծրեցի ի Սուրբ Գէորգայ Եկեղեցին որ ի Բիւզանդ :
Այդ Դօրիմազ Սուրբունը ի (20) զուոչ տայք Եւ զիմ Աթոռակալի մայրիկն եւ
դժահանեսի Մարկոսն շմոռմանք . բաւ է :

ՆԱՄԱԿ ԹԻՒ 42 (60Բ)

ՀԱՍՑԵ

ԱՍՏՈՒՃՈՒ

Հասցէ զիրո ի Սուրբ յերուաղէմ ի Սուրբն Յակոբ՝
ի ձեռո Գարբիկ Եւ Թէոդորոս վարդապետաց ,
զի ընթերցցին ի լուր ամենայն միարանից՝ ի բարին :

ՀԱՅԱՀԱՐԱՐԱՅԻԹԻՒԹԻՒՆ

Է

Տեսոնդ Գարբիկի , Տեսոնդ Թէոդորոսի Աստուճաբան վարդա-
պետացդ , Եւ ամենայն միարանիցդ Եւ զործակալացդ՝ Հա՛րցդ ,
Եղբարցդ , Եւ որդոցդ խօ ըստ ոպւոյ՝

ՀԱՅԱՀԱՐԱՐԱՅԻԹԻՒԹԻՒՆ

[6 Հոկտեմբեր 1737]

Զողջոյն սիրոյ Եւ զօրհութիւնն Աստուճոյ յոյժ կարօտիւ բնծայիմ
զոստամացեալու ծերութեամբ Գրիգոր իրու պետու անօվիտան , Եւ ժտեմ ի
բարձրելոյն՝ զի պահեսցէ զձեղ սիրով Եւ խաղաղութեամբ՝ աղաս յամենայն
չարեաց Եւ ի փորձութեանց , Եւ հարցանեմ զորպէնն ձեր ի բարին . իսկ թէ
դմէկնեալու Եւ զրամանեալս ի ձէնջ մարմնով Եւ ոչ ողւով թէ զննիցէք՝ Տեսոն
Աստուճոյ փա՛ռք : Բայց ո՛քան հեռացեալ եմ ի ձեր քաղցր տեսութեանց , ոչ
դադարի աշքո յարտասուաց՝ յիշելով զսէրն ձեր զանչափ Եւ զգութիւն , որը Տէր
արժանացուցէ կրկին սուրբ տեսութեանց ձերոց : Բայց զձեղ աղասէմ յալա-
զին պաղատանօք ո՛վ սիրեցեալքը ի Հոգոյն՝ զի զգայրէին ի ձեռաց չթողուք՝
զՄուրբ Տան շինութիւնն ի չէն պահեցէք՝ Եւ բնդ միմեալու Հողեւոր սիրով
միարան կացէք . զո՛ին , զքէ՛ն , զնախաննձ , զկատ Եւ զկուի ի ձէնջ անհետ արա-
բէք Եւ զսահման ժամակարգութեան հաստատուն պահեցէք յիշելով զանթիւ
աշխատանս Եւ զվան՝ զձեր Եւ զմեր՝ Եւ զիրու Եւ զիսրէնուրզս ձեր արտաքնոցն
մի՛ յայտնիցէք , Եւ բնդ անիծեալ խորամանկ աղդին Յունաց զրարեկամութիւն
մի՛ առնիցէք , Եւ թէ զոյ ի միջի ձերում այնպիսի ոք՝ ի Սուրբ Տանէդ փտարե-
ցէք Եւ ի բաց բարձէք : Եւ զեկեալ օրհնեալ ուխտաւոր մահտեսիքն վասն Աս-
տուճոյ յաւ շահեցէք զամենեսին վասն Աստուճոյ , զի ի բարեաւ զառնայն նո-
ցա զգանկատ մի՛ առնիցէն . Եւ ամենեցուն նոցա Եւ քաղաքացոց մեր ժողովրդ-
եանն զԱստուճոյ օրհնութիւն Եւ զհոգեւոր ողջոյնն ի մէնջ մասուցէք : Արի՝
կացէք Եւ մի՛ յուստհատք լինիցէք՝ աղքատի Աստուճն ողորմեսցի մէղ և ձեղ
Եւ բոլոր աղքիս մէրոյ . զազօթու սրտառուչս Եւ յորովս՝ սիրով ի ձէնջ պա-
հանջեմ , զի Տէր յաջողեսցէ զզործու մէր ի բարին : Եւ այս Եւս մի՛ լիցի ի ձէնջ
ծածկեալ , սիրելիք իմ , զի մէք զրտանդակ յայս Եւ զհողս մէր յԱստուճ
ձղեալ սպասեմք ողորմութեան նորա , զի բարեխօսութեամբ տիարցն մէրոց Եւ
ամենայն սրբոց իւրոց՝ Եւ ձեր արժանամատոյց աղօթիս քն դիմացի ի մէղ Եւ ի

տառապեալ ազգս մեր : Ամենայն զուր բանից եւ խօսից չհաւատայք՝ թէ հրա-
տարակեցն անիրաւ եւ անաստուած ազգն Յունաց . զի առա այլ զրոյց ինչ
ո՞չ դոյ բայց միայն այն՝ թէ ամենայն ազգ զիւր ժառանգութիւն կալցի եւ որ-
պէս էրն յառաջազոյն՝ այնպէս լիցի : Եւ թէ ի աւելի աւելի եւ պակաս զրոյց
ինչ դոյ՝ փութով մեղ ծանուցէք : Յամենայն կողմանէ մուզայիթ լիբուր , եւս
աւելի այն՝ զի բնդ պղծոցն այնոցիկ ի մաքառ մի՛ մտանիցէք թէ՛ զուր թէ՛
ուխտաւորքն եւ թէ քաղաքացին մինչեւ Աստուած այց արասցէ մեղ տառա-
պելոցն եւ աղքատացս Քրիստոսի : Միայն զաղօթս (Կոստնցին վրայ) յեր-
կարս ի Սուրբ Տեղիքն եւ ի Սուրբ յԱթոռդ խմում Հողով առնիցէք : Եւ ողջ յե-
րուու ի Տէր եւ ի պարձանս կարօտատանջ հիքոյու՝ որ ի Հոկտեմբերի զ զիիրս
ծբեցի յ՛՛լւսկուտարու մեր վանքն կոչեցեալ . բա՛ւ է :

ՆԱՄԱԿԻ ԹԻՒ 43 (45Բ)

ՀԱՅՑԷ

Ի ծածուկ հասցէ զիրս ի ձեռս Աթոռակալ Գարրիէլ վարդապետին , Տեղա-
պահ թէողորոս վարդապետին , Գանձապահ Յովհաննէս վարդապետին ,
մտհուսի Գաղպար Ամուճային , Թարգման տիրացու Պօղոսին , զի ընթերց-
ցին ի միասին , եւ ճիկ ի վեր մի հանցեն , եւ ի Տեառնէ օրհնեալք լիցին՝
ա՛մէն :

ԲՈՎԱՆԴԱԿԱՌԻԹԻԻՆ

Աստուծոյ

[17 Փետրուար 1738]

Բոտ յուղմանց խորհրդոց տառապելոյու՝ զանխուէ ի բարդաց գայս ինչ
վարկայ ձեղ ծանուցանել խորհրդարար , իմ սիրելի որդոցդ Հարազատից վրշ-
ասկացաց եւ չարչարակացաց խօսոց : Քանզի որովհետեւ միջոցս ազմկաւ լցեալ
տարուքերի՝ իրբեւ զրագմախուռն ալիս ծովու՝ պարտ իսկ է ի մէջ կայտացերո-
ցրս Աստուծոյ զապարատառութիւն տևսանել՝ թէոկտ յաջողումն Տեառնէ : Եւ
այս է զոր առևմո՞ զի յետ գնալոյ ուխտաւորաց ի սրբոյ քաղաքէդ՝ իսկ եւ
իսկ գոմենայն արդիւն Սրբոյ Տանն Աստուծոյ եւ զայլ իրս Սրբոյ Աթոռոյոյ՝
տէ Փտէրով յայլ եւ յայլ տեղիս թագուօջիք հնոի եւ ի զուրս սրբոյ եկեղեցոյն
եւ ոչ ի վանաց . զի թէ Հաշտութիւն չեղեւ՝ մէծ խոսկութիւն լինելոց է . մի-
թէ Աստուծած զրարին յաջողեցէ , ա՛մէն : Գրեցից եւ զայր՝ շամցի Հաջի Պէ-
քիր պաշայն որ է մեր բարեկամն՝ յանցեալ ամն զիր սիրոյ զրեաց եւ բնդ նր-
մին աղերս մեղ՝ թէ յերուազէմայ վերայ ինձ առէմ մի տաս առնուէ ոսկէ-
ոյիսութեան . եւ բարեկամաց ձեռօք առն միոյ այլազգոյ ծ (50) զառւ տուաք ,
թէ զնայ յօրտաւն՝ եւ բերցէ զգիրն . եւ նա ի զնալն ի ճանապարհին մեսու . եւ
ծ զոււն զնաց : իսկ ի զայլ օրոտուին ասս՝ կրկին ետու ձի (85) զառւ , զի առ-
ցէ առէմ մի , մի մին ի բարեկամաց մերոց՝ իսկ նա յետ աւուրց երեր զգիրն .
եւ ետու մեր իսպահիմին ընթեռնուէ . եւ տեսի զի փախանակ զՊէքիր անուն
զրեայն՝ Մէհմէտ զրեալ էին , եւ զիրն եւս անհաստատ . վասնորոյ որովհե-

1 Բանակատեղ , նամբար :

տեւ զբարեկամութիւն տեսեալ եմք յառնէն յայնմանէ , կրկին նք (82) դռուշ եսու՝ եւ հաստատ ընդ ըստկի վերայ զիր առեւ . եւ օթուրախ² այդք յերուաս զէմ , որ կարի գժուար էր , այդմ լինիր՝ եւ եղեւ . վասնորոյ ո'րդեակ իմ Գարդիէլ վարդապետ՝ ահա զզիրն եւ զառէմէն առեալ յաղայէն՝ յղեցի ընդ զրոյա դու որ կարի ծանօթ ես նմա , տուր զզիրն ի Պէքիր պաշայն եւ նք դռուշ առ ի նմանէ . եւ զզահմէթն մեր պատմեա նմա՝ եւ բարեւ արա իւրն : եւ զմիւս զիրն որ պաթալ մնաց Մէհմէտ անուամք՝ զայն եւս յղեցի . լինի թէ զազտ ծախցես միոյ ումէք՝ զի հազրը³ զանձ մի է ստացողին , թէպէտ մեղ զնաս եղեւ՝ բայց զանխուլ : եւ Հրէից զրերն եւ խէլաներն⁴ որ ընդ սալիանճուն էր՝ ի մեզ ենաս եւ ի տեսուն տուաք եւ եղեն չնորհակալք . բայց այն ստակն ի ձեր կողմանէն էր , որ զուք յայնայ զատաւորէն առեալ էիր՝ եւ մեր ի Հրէից առեալ՝ ի նորա մարդն տուաք :

(Երկրորդ էջ) Լրացեալն Արփոս կատաղին Ղայսերն՝ յորժամ ոչ բարով եկն ի տեղոյդ զմեր Պրոխորոն վարդապետն եւ զինորդն մեր՝ ծաղկամք յղեցի առել նմա ո՛չ բարի եկիր . եւ պիղծ սպասուորքն ասացեալ են թէ աստ ո՛չ է՝ եւ ի զռնապանի խուցն՝ նստուցեալ զմերոն՝ և այնքան պատիւ արարեալ , մինչ զի ի տեղի բախիի⁵ ջուր արրուցեալ . եւ այնպէս տիսուր զիմօք Եկին . եւ յետոյ ինքն եկեալ ի Սուրբ Գէորգ զմեր անդ ոչ եղիս եւ Տեան փառք զի կպիղծ երես նորա ոչ տեսուք . եւ զի նախ նկուն եւ երկիւղայի էր յինքեանց . բայց ի դար իւրեանց չաստուծոյ (?) թարդմանին անիծելոյ երես առեալ բարում հաջմունս առնէ ի վերայ մեղ՝ հեղնելու թէ զիստ ո'րդէս զայր եւ զնայր ի Սուրբ Յարութիւն բազում հստաղչօք⁶ , եւ ի Բնթէհչէմ փառօք մտանէր եւ ելանէր՝ մինչ զի կանայք զրով նմա տային . նաեւ յամենայն յեղուս կրմէնու մանքն դոյր՝ և բայ իւր անդուոն բերանոյ լիտի բարուցն քամահերով թէ զէրմէնի ազգն իւրեանց առաջնորդով ևս յայս հալս հստուցի եւ ոչ ո՛յլ ոք , անշափ զիր զրելով յերուազէմէ ի Բիւզանդ՝ եւ այլ բազում եպերանս ի սոյն կարգի . եւ իօ զայսոսիկ լուելով փա՛ս տամ Աստուծոյ ասելով թէ այս ամենայն եկն ի վերայ իմ վասն իմ մեղացն . եւ վասն այնորիկ զրեցի զի փոքր ինչ չշունչ դոյր թէ կրկին նու զալոց է վէքի՝ զոր Տէր մի՛ յաջողեացէ նմա զալ այդըր՝ զմեզ խմացէք՝ զի այսպէս է նոցա բարեկամութիւն՝ եւ յիցին նզայիալք յԱստուծոյ ազգօք եւ ժողովրդօք :

Զհանդուցեալ մահտեսի Սարզսի Կեսարացոյ զդրամն ըստ զրոյ թէմէս սսուեկին՝ առաք անպակաս յորդոց նորա , օրհնեալք լիցին ի Տեանէ : Ասուած ձեղ խէր տայ՝ օրհնեալն յԱստուծոյ մահտեսի Մելիսոն ազայն զԱռուր Սարզսի զրսի սէտէֆիի զուռն ա՛յնքան խարժով զըրկէր , եւ զէափայու զերեզմանատան զիիշատակարանի քարն ըզրկէր . ոչ մեր Աստուծատուր յարդապետն զրեր թէ ահա զքարն ի տեղն զրաք , եւ ոչ զուք օրհնութեան զիր մի նմա յղեցիք . եւ վախեմ թէ ի տեղն այլ չէք զրեր . համարիմ թէ մեք մոռացաք զրել ի բազում զրաղմանց . ո՛չ աւնիկ ապրանքն առաջի աշաց է . վասնորոյ ի հասանիլ զրիս՝ զդուռն չուտով ի տեղն տայք զնել . հռչակաւոր ծանուցմաք եւ պատարազաւ , եւ թէ բան մի այլ մեր Արքահամ վարդապետին ապսպրան են նորա , հարցէք եւ զայն եւս կատարեցէք . եւ լաւ մեծ զիր մի չնորհակալու-

2 Կայան , պաշտօնավարելու վայր :

3 Պատրաստ :

4 Զերծում (պարտի) տուող զիր , զրուրիմ :

5 Օդի :

6 Պահակ :

թեան վասն զրան և վասն համայու գերեղմանատան նմա յդիցէք անպատճառ : Եւ զու ո'րդի Յովաննէս վարդապետ՝ զիրն մեր եւ բառն թուրքի զրս եւ ընդ մեծ զրոյն ըղբկես՝ որ չլինիմք ամօթով , որպէս արժմ . միթէ քի՞չ երախտիք ունի ի վերայ մեզ : Ահա ընդ զրարերին և զեկալպահապ էֆէնտիին չինած ֆերմաններն եւս յդեցի . Ար (38) զոււշ զիարէն ետու՝ առէ՛ք ի նմանէ : Ի մօտ Համբայ առաջնորդ Պետրոս վարդապետն ինձ գր (3000) զոււշի փոլիցոյի թէմէսուկ կայ՝ Աստուծոյ Համար չմոռանայք առնուք ի նմանէ՝ զմօհրս պատուեցէք եւ զգիրն առ խս ըղբկեցէք , զի ինձ զրեալ է թէ յերուսաղէմ կուտանկմ տամ զգիրն : (Երրորդ Էջ) Եւ ահա զՄուրք Յարութեան շրջապատ վարդուրի պակասն զ վեզկ կտորն զուպուրով յդեցաք ընդ գատաւորի նաւին , ձեռամբ զատաւորի թէրզի պաշի օրհնեալ մահտիսացու Յարութիւնին : Եւ թէ խարջ է արեր ի վերայ վարդուրին տայք . Եւ կարել տայք զվարադոյրն՝ զի լմնցաւ . Եւ բարոյ անմնաս հասանի ի տեղդ : Եւ մեր մահտեսի Գաղպարն պալաթցի Լազ կոչեցեալն՝ օդնեաց զնոյն՝ Աստուծոյ Համար յորժամ զրէիդ վարդուպետի յիշատակարանն սրմայով ի վերայ տայք զրել՝ եւ զնորս անունն եւս տայք ք կտորի վերայ զրեյ այսպէս . յիշատակ է մահտեսի Գաղպարին եւ մահտեսի Հուրիին : Ո'րդի Յովաննէս վարդապետ՝ զու՛ւ մուզայիմ լիցիս տաս զրել . զի այս մահտեսի Գաղպարն ո (1000) զոււշ եւս Սրբոյ Աթոռոյն . որ ըգմանքն Ուսկուտարու չինեցաք Աստուծով . խնդիրն այս զի ի Սուրբ յԱթոռն , ի Սուրբ Աստոււածածնի շիրիմն՝ քառասնից տամք կատարել՝ վասն Աստուծոյ տայք զվերողեալ անունն յիշատակել ի Սուրբ Պատարագն . զիս պարտական ։ Թողուք զի խոսացայ նմա . Եւ ի Սուրբ Յարութիւն : Եւ այդ թէրդի պաշի Յարութիւն՝ յամենայն կողմանէ յԱստուած եւ ի ձեզ ամեննեքան : ԶՅաղլտին տեղոսար աղային զալայիք կութեան զգէրաթն՝ յդեցաք ահա՝ Եւ թէ զպատճութիւն զամենայն զրեմ զգէրաթին՝ ա թապազայն թուիստ չօգտեր . թէ ո'րչափ վաս արգեր ի վերայ իւրն եկեր էր ի տեզու՝ Աստուած զիտէ՝ որ յայս խեղճ ժամանակն՝ մեր Եազիմի Բարահմանի ձեռօք չորս հարիւր եւ հօթն զոււշ խարջ զնաց . և ո (1000) մումաթով¹⁰ հազիւ եղեւ . բարով վայելի թէ զյաւութիւն զիտէ . ո'րդիք Գարբիէլ վարդապետ եւ տիրացու Պօլոս՝ կոչեցէք զալու զինքն եւ Յովաննէս վարդապետն թող կարդայ՝ որ ինքն իմանայ . Եւ իւրն ապազրեցէք որ զմեր անունն ընաւ . չի տայ պարձելով թէ նորա արած են , թէ զմեր խաթրն կուզէ . Եւ զիտեմ որ դրամ չէք կարեր յիւրնէ առնոււ . բայց թէ քար կամ քիրէն¹¹ կամ այլ ինչ կարացիք առնոււ . յիւրնէ՝ մեծ քաջութիւն է . Եւ Աստուծոյ Համար չլինի՛ չլինի՛ թէ այսպիսի բանի մօտենայք . թէ եւ թշնամութիւն առնիցեն , զի շատ վիսա կրեցի որ ոչ կարեմ զրել : Ո՛չ ինձ՝ իմ աշացու լոյս որդիք վշտակիցք եւ ցաւակիցք . զի այս ք ամ եղեւ որ ի Սուրբ Տանէդ եւ Եալ եմ , Եւ չեղեւ թէ ճշմարտութեամբ մէկ բանի մի Համար աւետեաց զիր մի զրէի , թէ վասն մէր զալոյն , Եւ թէ վասն այլ ինչ իրաց . այլ այժմ զատոյդն զրեմ . ի զալ ամին թէ ողջ մնացի՝ այլ յայս նորս Բարիլոն՝ անհնար է ինձ մնալ . միայն ուխտաւորաց՝ Եւ մէր որդի Աստուածատուր վարդապետին զայոյն եւ ձեր օդնութեան կնայիմ . զուք զիտէք եւ ձեր զայրէթն . զի յամենայն կողմանէ զատարկացեալ նաեւ յուսահատեալ եմ . բանիկ մի ըցրէկք շատկեկ

7 Արքունի երավարակ :

8 Թուղթի թերք :

9 Գրադիք :

10 Աղայանեով :

11 Կիր :

լինի, որ Հեղ մի գրմուռոքս պոծացնեմ յայս ակզայս Աստուծով և լանեմ, զի մտչեցայ կրկին անձամբո՛ և և և ի վտանգի. Աստուած ճար առնէ: ԶՄիհցի Յամթաւի են (500) դուռշի թէմէսուկն ի մահաւեսի Աստուլին առաք. և կրկին անդր յղեցաք. լինի թէ մահաւեսի Աստուածատուրն ողոքանօք բան մի առնու. և թէ չեղեւ՝ առնուք դդիքն ի տեղդ թող մնայ, զթէմէսուկն ի մէջ մահաւեսի Արայի ըրոյն զբաք. Հոգս թող անէ վասն Աստուծոյ:

(Չորրորդ էջ) Հասարակ ուխտաւորաց ահա կրնզակ մի յղեցի՝ թէ պիտոյ է ի Սուրբ յԵկեղեցին տուք ընթեռնուլ, և թէ ոչ՝ դուք զիտէք: Ի մյուս ածի թէ զիր մի ամենայն միաբանից զրեմ, և ոչ զրեցի որոյչետեւ շահ չունի. Աստուած ամենացունց զգաստութիւն տացէ. և զուք կրկին ողջութեամբ ողջ յերուք ի Տէր և ի պարձանս իմ. որ ի Փետրիարի ծէ: ի Սուրբ Գէորգայ և կեղեցին զգիրս ծրեցի. բաւ է:

Զինուի Օդյուի սուրկունի բանն չկարացաք իմանուլ որ ընդ նոր կօժրուկի. Հասան արայի ըրոյն զկատարեալն զրեսլ եմ. թէ ք ազգն զազտ ի մէնչ կամենցեալ են առնել. բայց ճշմարիտն ոչ խմացաք. թէ չիինի՝ նէ բնդ նոր զատաւրիդ է՝ սոդրութեամբ ողջույն կէս եւ յման Սրբունի. այլ մեզայ՝ զի դուսոյդն ոչ խմացայ. իմաստութեամբ խորհեցարուք, զի մի շփոթ ինչ զիսպիցի մերով պատճառաւ. և Տէր փրկեսցէ զձեղ յամենայն չարեաց՝ ա՛մէն:

ՆԱՄԱԿԻ ԹԻՒ 44 (51Բ)

ՀԱՅՑ

Աստուծով

Հասցէ զիրս ի Սուրբ յԵրուապէմ, ի Գերապայծառ յԱթուն ամենայն Հայոց ի Սուրբն Յակոբ, ի ձեռս Գարբիէլ, Թէոդորս և Յովաննէս վարդապետաց. անբաց ի նոսա հասուցանողն՝ յԱստուծոյ զվարձս առցէ: Ա՛մէն:

ԲՈՎԱՆԴԱԿԱՐԻԹԻՒՆ

Է՛

[25 Ապրիլ 1738]

Իմ աշացս լոյս աշխատավաստակ Պետացդ՝ և ամենայն զործակալաց, և ամենայն Միաբանից զողջոյնն սիրոյ կարօս անձկութեամբ մատուցանեմ թափսիծ սրտիւ, և զայս ինչ յայս առնեմ ձերդ մտերմութեան. զի ընդ այս նախ զարմանամ, թէ ո՛րքան զիր մինչեւ ցայժմ մեզ զրեցիք յամենեցուն մէջն այս էք՝ թէ ի քէն զիր ոչ զայ առ մեզ՝ հապա ի՞նչ կլինի կամ ո՞վ կպահէ, և այս ինձ մէծ տարակուսութիւն. այլ եղեւ զինչ որ եղեւ՝ և ամն ևս էանց ի վերայ. Աստուծով զառաջակայն հոգացուք. եարամազիցն Աստուած ինսափ տայ. մեք այլ այժմ նաւի գալոյն ակնադէս կսպանեմք զոր Տէրն ամենայնի խաղաղութեամբ հասուցէ ասո՛ և թէ զոր ինչ ընդ պալիսաւն զրեալ էմք՝ արարեալ էք՝ Աստուծով ամենայն բան զմանապարհն կդանան. վասն ձողի տալոյն Երկուքն հոգս չեն աներ՝ մեք զի՞նչ առնեմք, զի ամենայն ոք յիւր տառապանս անկեալ չեծին. և եսոփուի² ձայն հանելոյ ժամանակն չէր, բայց թէ զկատարն առեալ է՝ Աստուած հաստատ պահէ՝ և ի թշնամեաց շար լեզ-

ուաց աղաստեսցէ . եւ նորապոյն այլ իր մի՛ առնէք ի՛մ որդիք , զի ժամանակ լը-ռեկոյ է . Տէր Աստուած զմերջն ի բարին արասցէ . ընդ Լատինան կատարեալ սիրով մնայք ո՛քան կար է ձեր , եւ զայլաղջեաց դիմաւորսն եւ զամենայն ո՛ք յաւ շահեցէք , եւ ընդ այլոցն որպէս եւ զիտէք . եւ երկուց ազգաց տիրութիւն արէք սիրով . զմահտեսին աղաչեցի վասն աղարի մէկ ուսուալին՝ թէ զնեաւ . Հա՛ ասաց եւ չէ՝ եւ այնովէս յերկրայս մնաց . զուք այլ սիրով ընդ միմեսնա կացէք եւ աղօթս վասն մեր արարէք , զի զերծցուք յայսմ վայրացո՞ւ եւ ընդ երկա՞ր եղեւ պանդխուութիւն իմ ցաւալի կենօք . Տէր զիրէմն իմ խնդրեսցէ ի թշնամենց իմոց ըստ իւրն անսուտ բանի , զի ումեք վնաս ինչ ոչ հասուցի և ինքեանք զայս արարին ընդ իս՝ ակն ունիմ ի բարձրեան Տէր զի ոչ թողու նուց զա՞խ եւ զմա՞խն իմ , որ այս ի ամ է որ կամ ի տաղնապի՞ եւ ողի իմ քաղի վշտօք , նեղութեամբ եւ կարօտիւ . թէ այլեւայլ բարբանջմունք լսէք յորդոցն անիմից մի՛ հաւատայք . եւ ընդ ումեք կազ եւ կոփ չանէք , Հետ ձեր զործոյն կենայք , եւ Աստուածով ի մօտակայ օրերս կրկին զիր զրելոց ևմ ձեզ , սակայն զրնութիւն զրաբերիս զիտէք (լուսանցքին վլրայ) զի յելանելն իւր կինդրէ զիր , մէք այլ ստիպով զայսքանս զրեցաք յլորդիլի ին . : Ողջոյն տաջիք մեր բարեկամացն յանուանէ՝ եւ որ ոք զմեզ կհարցանէ . ի Մարտ զիր եւ տէֆուէր եկն թէ այսքան ապրանք յդեցինք , եւ զուք մեզ չխմացուցիք եւ ոչ նոցա չխոսի զիր միթթարական յդեր էք օրհնութեան . Ես ասուի յդեցի չնորհակալութիւն , զուք այլ յդեցէք : Եւ մեր տղայքն համայնք Մարզիս վարդապետի զաջո ձեր համբուրեն կարօտիւ . եւ ողջ լերուք՝ ի Տէր եւ ի պարծանո հիքոյու Գրիգոր իրր պետի՝ որ ի Սուրբ Գէորգայ եկեղեցին զդիրս ծրեցի . բաւ է :

Իմ աշացս լոյս Հօր Տերոյ յերուապէմն՝ բարուս աչօք զուրը ամիսն համբուրելով զողջոյն սիրոյ տարիմամբ կորոտի ընծայեմ , եւ իմ որդոց իւր սպասաւորացն զԱստուածոյ օրհնութիւն տամ , զի բաւ սպասաւորութիւն նմա առնիցեն : Ա՛ Տէրն ողորմեցի , ա՛մէն :

ՆԱՄԱԿԻ ԹԻՖԻ 45 (54Բ)

ՀԱՅՑԵ

Աստուածով

Հասցէ դիրս ի Սուրբ յերուապէմ , ի Սուրբն Յակով՝ ի ձեռս
Տեսրցն Գարբիէլի , թէողորսի եւ Յովաննու զործակալ վորդու-
ովեացն , ի բարին :

ԲՐԱՅԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Է՛

Աստուածային Սրբոց Տեղեացդ՝ եւ զերազահ Տեսանահասուստ Սրբոյ Ա-
թոռոյդ ժրաջան եւ բազմախոնջ քրանածոր վաստակաւորացդ՝ Տեսանդ
Գարբիէլի , Տեսանդ թէողորսի եւ Յովաննու աստուածարան վարդապե-
տացդ՝ Հոգեծին որդոցդ իմ ի Քրիստոս՝ զաէ՛ր՝ զողջո՞յն՝ եւ զօրհնու-
թիւն Տեսան՝ ընծայեմ բազմամբ սիրոյ .

¹ Անզամբ , ստամբակ , անպիտան :

² Եինուածք , շէնի , շինուրին :

[Յ Յուլիո 1738]

Եւ արտօսրածոր թախիծ սրտիւ ի դումա անկեալ՝ եւ զմշտամօթ երեսս
իմ ի հասարակաց մայրն իմ մածուցեալ ինդրեմ ի Տեառնէ՝ զի տացէ ձեղ զո-
րութիւն, արփութիւն եւ կարոզութիւն և փրկութիւն յամենայն փորձու-
թեանց: Եւ այս ինչ ձեղ յայտ լիցի, զի ահա Աստուծովի ին տէրու-
նական ուխտաւորաց նաւն յորում էր սիրելի որդին մեր Աստուծատուր յար-
դապետն՝ և կին հՀաս աստ՝ եւ զինի քանի մի աւուրց և կին եւ միւս նաւն: Եւ զի
թէպէտ զօղանջմունք յոլովք՝ այլ յու ունկնդրեն մեր՝ եղն նկունք՝ թէպէտ
ոչ զալարին այնք որք վարժեալլք են ի նոյնն: և Աստուծատուր վարդապետն
դոր ինչ ի ձենջ առեալ էր՝ զայն զամենայն լիովին եւ անթերի բերեալ հասոյց
ի ձեսս իմ, ոչինչ մնալով ան նա յարդեանց Սրբոյ Աթոռոյն՝ ըստ զրեցելոյ
ձերոյ: Տէր լիցի ձեղ եւ նմա վարձատրիչ: Եւ համայնք մահանսիք ողջք եւ ա-
ռողջք մարմուգ հասին աստ՝ բայց զուզան ոչ զիտեմ: Եւ ի Յունիո ամսոյ ին
կրկին զիր սիրոյ ձեր ժամանեաց առ մեզ եւ վասն կոյր զատ[աւոր]ին ահա զա-
մենայն զդրամօն մեծաւ ջանիւ հաւաքելով հատուցաք և զդիր ի նմանէ առաք.
Աստուծած զմեր Գէորգն օրհնէ որ ժողովեաց՝ եւ զի՞ է այս նոր սովորութիւն
եւ զի՞նչ ակնկալութիւն ի հնոյ զատաւորէ է մեզ օվում՝ ահա էտ եւ կուտէ
հանդիսա անչորհակալու ինքն եւ առօղ չէլցպիքն: թարց տոկոսեաց մի՛ եւս
կրկնեացի այսպիսի իր: զի սակաւ մնաց որ զմանսն մարթէաք կրել իբր թէ ձեր
է եւ ոչ նորա: Եւ վասն նորոյ զատաւորի ռային¹ կամէաք առնուլ ի հրէց եւ
տալ՝ բայց զունջ իմն եւ թէ կենազրաւեալ է: վասնորոյ եւ լոեցաք այժմ, եւ
ոչ զեկուցաք առողին զդրամն: զրեալ էիք թէ զատ[աւոր]ին կանաչին վասն
մեր զյանձնարարական զծիր զրեաց եւ ահա լոեցաք: եւ այն ի մեզ ոչ հհաս:
և ի Լատինացոց զր զիրն որ առեալ լոեցիք իբր թէ զեսպանին մեծի՛ ոչ՝ Գաղ-
պարաքի թարզմանին եւ որ է ի տեղի Զամարիային, որ է նուաստ քան զնա եւ
բարեկամ մազուտացն անիծելոց՝ բայց մի՛ տայք յերեսս նոցա: Եւ զգոյշ սիրով
րնդ նոսսա վարեցիք, զի մեր ամենայն իրն ի կողմէն նոցա անկաւ հողալոյ Աս-
տուծով, զի յամենեցունց զձեռու քաշեցաք՝ յոյս մեր յԱստուծած եւ ի սուրբ
իրը: Եւ վասն քաղաքացոց չմերայնոցն՝ ո՛րդիք՝ յայտքան ժամանակս մեր
համբերեցաք՝ զոր միայն Աստուծած դիտէ զքաշածո՞ դուք այլ սակաւ ինչ համ-
բերեցիք: զի նոցա խրատ ոչ իւիք լինի՛ եթէ ոչ պատժմամբն ի Տեառնէ: Թոյլ
տուք զակաւ ինչ ժամանակ: ո՛չ՝ զի միւ բժշկեալ բորոտացն ի Տեառնէ՝ խո-
թացոյց զկերիս իբրեւ ընթերցայ: Եւ եմ յիրաւի իբր զմեռեալ, եւ սիրովն Աս-
տուծոյ պատուիրեմ նաեւ հարկիւ՝ զի վասն իմ ասա լոեկոյ զդրամ չլինի՛ չի-
նի՛ թէ պարտօք ըստակ առնուցուք եւ լիցիք: Եւ թէ ի տեղդ վասն Սրբոյ Տա-
նըր հարկաւորութեան պարտօք առնիցիք՝ վայ' զլիոյոյ՝ ուրեմն պիտոյ է զի ե-
րեց կնիքն ի վերայ թէմէսիկին լիցի՝ զի մի նենդիցիք զբիմեանս՝ որովհե-
տե ոչ միաբանեցայք ո՛քան եւ զրեցի: ի ինձ մեռանիլ ահա լաւ էր՝ քան թէ
վասն պարտօք առնելոյ զրէի: այլ Տեառն կամք օրհնեալ լիցի: եւ ահա Աստու-
ծով նոյն նաւն մեր ուխտաւորաց ի չորսն Յուլիոսի յԱւազի Դուռն զալոց է՝
բայց ուխտաւորաց զեռ եւս ձայն մի ոչ զոյ՝ Տէր հոգացէ: Եւ վասն Յուլ-
յայց ուխտաւորաց զեռ եւս անկատար մնաց: եւ վասն ցամաքի ճանա-
պէտու իրացն խօսեցաք եւ զին եւս անկատար մնաց: նոր զամանակին վասն Սլին
պարհին սո՞ւս: նոր քաղաքապետին՝ Հովուեան մահանսի աղայն վասն Ալին
զրեաց աղերս զի կրկին նա լիցի Սուրբ Տեղոյդ փոխանորդի՝ զի նոր է փա-
շայն: Տէր Աստուծած աշխատողացդ վարձահատուց լիցի վասն նոր չինուածոց,
բայց վասն զմպէթին եւ այլ չէնքի ձեռք մի՛ տայք վասն Աստուծոյ՝ թողէք

1 Գրաւ, զրաւական:

զմեղ ի մեր հաւն մարդիկ՝ շտո շահ կայ յուտելէի դար. (լուսանցքին վրայ) զի թշնամոյ տէրն պարով միշտ զզոյլ կալ. զի տեղոյդ եկեալ կեսարն» ասու արարին աւեղոր մէք քիլ և ի գալ իրեանց ուժառաւորաց նաւին՝ յայնմանէ ևս զրբ կեցին, բայց զըոյց իւմերոչ ել. և աստի յոմանս թէ խնդրեալ է աղերսիւ տալ Հրաման զալ այդը իրը զմիարան նամակ. Եւ նորս եւն զուխտաւորաց դնու վարձեցին. Եւ ահա զՑունաց զնոր վարթարի տեղոյդ դպէրաթի սուրէթն ի մէջ զըրոյս եղեալ առ ձեզ յզեցի. բայց շտո մէ յայտնէք. ու մէ որ սիմոյ է յայտնէլ նմա առանձին ցոյց տուք. Եւ զայս եւ սիրով պատուիրեմ զի կազ եւ կրուի շընի թէ առնիցէք ընդ մաղուացն, Եւ ընդ Լաստինս յոյժ սիրով կացէք. Եւ ի ձէնչ շնորհակալ եմ յոյժ սիրեցեալ որդիք իմ եւ աշացու իմ լոյսք՝ որ յայսքան ժամանակս բազում նեղութեամբ զՄըրոյ Աթոռոյդ զործն հոդացիք եւ զիս ամօթով չարարէք. Աստուած զձեղ օրհնէ եւ զօրացուցէ. Եւ բայտու աչօք զձեղ ապաչեմ զի սակաւ մի յայլ համբիրեցէք, զպայրէթն ի ձեռաց չթուզուք. զմիարանս եւ զայլսն սիրով շահէք, զտան պակասութին հոդայք, եւ յաւելորդացն ի բաց լերուք. Եւ ի Սուրբ Տեղիսն՝ դուք եւ միարան եղրարքն ազօթս արարէք, զծէք ապաչելով զի յաջողեաց զզործս մեր ի բարին. որ Եւ ամենացուն զսիրոյ ողջոյն մատուցանեմ: ՅԱԱՍՏՈՆԻ կնոջ ընչեցն խէր չկայ, զմէրէսիյէքն² յոմանց առաք եւ մեացեալքն տալոց Են բաց յերկուց երիցունց. Զմիւոնիսոյ զէտնէ հաստատեցաւ ի Սուրբ Գահն զոնունն յիշեցէք. ի Հայրակու տէր Արքահամէն զսիրոյ եւ զորդորական զիրն պակաս չանէք. զՄէֆէրն եւ զմէիրխանն լաւ էք արեր ի վերայ զործոց զնելով. Եւ ահա այսօր որ է Վարդակակի պահոց ք. շարին, նաւն եկն ի Դում Ղափուն, Աստուած ուխտաւոր տայ. թուի ի մօտ օրերս Հրէից նաևն աստի կերանէ. թէ այլ զրոյց յինի ընդ նոսս յդելոց եմ. Եւ այժմ այսանս բաւեսցի. ողջ լերուք ի Տէր եւ ի պարձունա Գրիգոր իրը պետի՝ որ ի Յուլիսի գ զգիրս ծրեցի յԱւելուտար ի մեր մանքըն: Իմ սիրելի հօր թէիդ վարդապետին կարօտի զողջոյն ոնծայեմ. Եւ ամունայ մահանեսի Գաղպարին եւ թարդման տիրացու Պօղոսին եւ ամենայն զործուկարաց կարօտ աղջունիւ զԱստութիւնն մատուցանեմ:

Հասցէին տակ

Թրաբերիդ բ(8) զօլքայ տուաք:

ՆԱՄԱԿԻ ԹԻՒԻ 46 (55)

ՀԱՍՑԷ

Յերուսաղէմ, ի Սուրբն Յակոբ, ի ձեռն

Յօմհաննէս իտէնմ մարդապետի զանձապահնի.

անբաց հասցէ գիրս ի բարին:

ԲՐԱՅԱՆԴԱՐԱՐԻ

կ

[15 Օգոստոս 1738]

Թրիստոնական աղջունիւ. Եւ օրհնութեամբ բազմու ծանիք սիրելի որ-

2 Գրաւ: Փոխ տանուած դրամ:

3 Կ'ակնարէկ Ղազար Ա Զահեկցի:

զի իօն Յովհաննէս բարգմահանձար վարդապետ . զի այդ Ալէքսան տիրացու գրաբարերդ՝ և յԱկնայ՝ և յանցեալ ամս մայր դորս այրի զոլով և կն յախտ և մասց այլը և մեր օքնեալ բարեկամ մահանեսիքն՝ զայդ տղայդ բերեալ յանձնեցին ի մեզ վասն ընթերցման . և այս մի ամ է որ առ մեզ է , և ունէր կարս վասն ուստանն կը թութեան . և զմեր որպէսութիւն գիտես թէ յո՞ր խղճութեան և վշատիրութեան միջի ևմք , մոռանալով զմեզ և զայն զորս զիտչաք . ո՞չ խղճութեան . վասնորոյ խիղճս ևկն զա մեալոյ թարց ընթերցման . յորդորեցի զալ այլը . որ եւ ահա յդեցի այլը յանձնելոյ ի մեր յարդի Աստուածատուր վարդապետն . զի Աստուածով յորժամ այլը հասանիցին՝ բերեալ ի քեզ յանձնեացէ . արդ՝ սիրովին Աստուածոյ պատուիրեմ քեզ՝ զի վասն իմ եւ վասն բարեկամոց մերոց խաթերն՝ բնկայցիս մեծառ զիւով . եւ հազր յանձին կալեալ ու սուսցես զզա ի հանձնարս իմաստութեան . և խնամարկեացես Հոգեւոր յանձնեացութեամբ . և զաեզ և զծածկոյթ տալով զմա ըստ պիտոյից . զի անընդել է վանացն կացութեան . վասն այնորիկ կրկնաբանեմ զի յօժար կամօք յուսուզյն խնամս տարցես զմա՝ և մի թողուցուս ինքնազիմութեամբ եւ զատարկ չընապայիլ . յԱստուած եւ ի քեզ յանձին զի մեր որդի է եւ որբուկ . և ողջ լեր տերամբ ի պարծանս (լուսանցքին վրայ) փուեալ ծերոյս հօրդ զառամացելոյ Դրիբոր իրք պեսի որ յօդոստոսի ժե զզիրս ծրեցի . բաւ է :

2 рот. Крас. флаги

(Gwp. S)